կրի բազումք վաճառականք և տէր ընչից և գա-
ւառաց, տեսանելով հաստատութիւն պայմանին
և դաշնաց սոցայ, և պահելով զուխտս խոստ-
մունս իւրեանց, զի ոչ ոք 'ի նոցանէ անցանել
կարէր 'ի խոստմանց և սահմանէ դաշանց իւ-
րեանց, կամաւորապէս ելին և մտին ընդ ժողովս
այս հռոմայեցւոց խոստանալով տալ նոցա ո-
մանք հարկս, ոմանք մաքսս, ոմանք հասս և
ստանալին դաշին 'ի նոցանէ պահպանութեան, և
դաշին սոցայ այնքան հաստատեցաւ, և պայման
սոցայ այնքան աներկբայեցաւ և պահպանու-
թիւնն սոցայ այնքան աներկիւղալի դտաւ զի
բազմիցս անգամ խեղդեցաւ զօրաւոր հռոմա-
յեցի, պատճառն կողոպտելոյ միոյ հաւի և եր-
բեմն պատճառն մի քալամի որում կողոպտեալ
դտաւ ընդէմ դաշնադրութեան սահմանին իւ-
րեանց, վասն որոյ Օրաւուր բարձրանալով համ-
բաւ բարութեան օրինաց և սահմանաց սոցայ,
ժողովեցան 'ի վերայ սոցայ 'ի չորից կողմ աշ-
խարհէ բազմութիւն երիտասարդաց, և սոքայ
առնուլով ճաշակն քաղցրութեան սահմանի 'ի
Շրթունս իւրեանց՝ Օրաւուր պնտեցին Օրէնս և
սահմանս իւրեանց համեմատ բնական բնութեան
մարդոյ, մինչ զի հաճեցան դողանալ կանայս
այնքան որում հարկաւոր դտանիւր վասն բնու-
թեան իւրեանց ամուսնանալոյ, նաև երկայնա-
մտութեամբ արարին սահման ընդ մէջ իւրեանց